



ՆՐԵՎԱՆԻ
ԶԱՂԱԶԱՊԵՏԱՐԱՆ

ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

2017
ՏԱՐԵՎԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



Սիրելի համաքաղաքացիներ,

Երևանի քաղաքապետարանն ամփոփում է աշխատանքային տարին արդեն ավանդական դարձած տարեկան հաշվետվությունների թողարկմամբ: Լիաիույս եմ, որ դուք կթերթեք հաշվետվության էջերը և կծանոթանաք անցած տարվա ընթացքում Ձեր վարչական շրջանում կատարված աշխատանքներին: Ուրախությամբ

եմ արձանագրում, որ Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում մեծածավալ աշխատանքներ են իրականացվել, և տարեվերջին կարող ենք վստահ ասել, որ ձեռքբերումների շարքը ոգևորիչ է: Պետք է նշեմ, որ այդ գործում իրենց զգալի լուծման հավասարապես ներդրել են ինչպես մեր բնակիչները, այնպես էլ վարչական շրջանների ղեկավարները:

Վստահ եմ, որ առկա որակական փոփոխությունները՝ բարեկարգված բակային տարածքները, կառուցված խաղահրապարակները, ավելացած կանաչապատ տարածքները, բարեկարգ ու լուսավոր մայրերն ու փողոցները իրենց անմիջական ազդեցությունն են ունենալու Երևանի յուրաքանչյուր բնակչի կյանքի որակի և ընդհանուր քաղաքային միջավայրի դրական փոփոխության տեսանկյունից:

Վստահ եմ նաև, որ այն տեսանելի արդյունքը, որ արձանագրել ենք հարմարավետ քաղաքային միջավայր ստանալու գործում, լինելու է յուրաքանչյուրիս հոգատար վերաբերմունքի ու հոգածության առարկան, ինչն էլ թույլ է տալու իրականացնել նոր ծրագրեր՝ մեր մայրաքաղաքի և նրա վարչական շրջանների զարգացումը դեպի երկրաժամկետ հեռանկար ուղղորդելու նպատակով:

Տարոն Մարգարյան
Երևանի քաղաքապետ



Կենտրոն վարչական շրջանի հարգելի բնակիչներ,

Ամփոփելով 2017 թվականի ընթացքում կատարված աշխատանքները՝ ուրախությամբ արձանագրում ենք, որ տարին հազեցած է եղել զարգացման ծրագրերով և բազմակողմանի աշխատանքների շոշափելի արդյունքներով: Արդյունքները զգալի են գրեթե բոլոր ոլորտներում՝ սոցիալական, կրթական, մշակութային, քաղաքաշինական: Կենտրոն վարչական շրջանը ոչ միայն Երևանի սիրտն է, այլև նրա այցեքարտը և այս տարի այն պատվով է ներկայացել մայրաքաղաք այցելած հյուրերին: Կենտրոնը նաև մայրաքաղաքի այն եզակի հատվածներից է, որտեղ, ի դեմս մայրաքաղաքում ապրող ու աշխատող օտարերկրացիների, խաչվում են տարբեր մշակույթներ, իսկ կենսաձևերի բազմազանությունը նոր շունչ ու թարմություն է հաղորդում մեր վարչական շրջանին:

Հարգելի բնակիչներ, մեր բոլոր ձեռքբերումները մեր համատեղ աշխատանքի պտուղն են: Ցանկանում եմ իմ անկեղծ շնորհակալական խոսքն ուղղել ձեզ սրտացավության, հոգատար վերաբերմունքի ու պատրաստակամության համար: Համոզված եմ, որ հետագայում շարունակելու ենք նույն ոգով ու եռանդով, նվիրվածությամբ և նոր լիցքերով կյանքի կոչել նորանոր ծրագրեր՝ ի բարօրություն Կենտրոն վարչական շրջանի յուրաքանչյուր բնակչի:


Կենտրոն վարչական շրջանի ղեկավար
Արա Մադոյան

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

2017 թ. Կենտրոն վարչական շրջանում իրականացվել են սաֆալտապատման և բարեկարգման աշխատանքներ:




- ✓ Վարչական շրջանում սաֆալտապատվել են **96041** քմ ընդհանուր մակերեսով փողոցներ, մայթեր և բակային տարածքներ. իրականացվել են **144950** գծմ ճաքալցման և փոսալցման աշխատանքներ:
- ✓ Սալիկապատվել է **950** քմ ընդհանուր մակերեսով տարածք, նորոգվել և տեղադրվել են **695** գծմ եզրաքարեր:
- ✓ Բարեկարգման մեծածավալ աշխատանքներ են իրականացվել «Կարապի լիճ» զբոսայգու տարածքում:
- ✓ Բոլոր նորոգվող և հիմնանորոգվող փողոցներում, ինչպես նաև հանրային նշանակության շենքերի մուտքերում կառուցվել է **55** թեքահարթակ:
- ✓ Փողոցների աղբամանների կոնտեյներների համար կառուցվել է **85** հարթակ:



ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ

2017 թ. բնակարանային ֆոնդի պահպանման ուղղությամբ Կենտրոն վարչական շրջանում վերանորոգվել են շքամուտքեր, տանիքներ, ջրթափ խողովակներ, իրականացվել են այլ աշխատանքներ:

- ✓ Վարչական շրջանի **120** բազմաբնակարան շենքերում վերանորոգվել է **200** շքամուտք, ներքին հարդարման, բազրիքների և պատերի ներկման աշխատանքներն իրականացվել են մուտքերի բոլոր հարկաբաժիններում: Նորերով են փոխարինվել նաև հարկաբաժինների հին պատուհանները, ներկվել և բարեկարգվել են աստիճանավանդակները, պատերն ու առաստաղները:
- ✓ Վարչական շրջանի **94** շենքում վերանորոգվել են **10539** քմ ընդհանուր մակերեսով հարթ և **178** շենքում **5050** քմ ընդհանուր մակերեսով թեք տանիքներ:
- ✓ **110** շենքում իրականացվել են **2025** գծմ ջրթափ խողովակների նորոգման աշխատանքներ:
- ✓ Վերանորոգվել է վթարային 17 պատշգամբ:
- ✓ Ապակեպատվել է **300** քմ պատուհան: Տեղադրվել է մուտքի **20** դուռ:
- ✓ **381** շենքերում մասնակի նորոգվել և սպասարկվել է **427** վերելակ:
- ✓ Ջերմամեկուսացվել է **1880** գծմ խողովակ:



ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ

2017 թ. Կենտրոնն վարչական շրջանում իրականացվել են բակային տարածքների բարեկարգման և կահավորանքի, խաղերի տեղադրման, նկարազարդման և գունազարդման աշխատանքներ:




- ✓ Բարեկարգվելուց և ամբողջությամբ կահավորվելուց հետո շահագործման է հանձնվել **7** նոր բակային տարածք: Բարեկարգվել է **25** բակային տարածք:
- ✓ Մաշտոցի 41, 43, 45, Բաղրամյան 26, Հանրապետության 62, Կողբացի 3ա, Կողբացի 1, 1ա, Արշակունյաց 6, Բոյունովի 28 բակերը բնակիչներին են հանձնվել հիմնանորոգված աստիճանավանդակներով, ընդարձակ ճեմուղիներով, տաղավարներով, մանկական խաղահրապարակով, գեղեցիկ նստարաններով, նկարազարդված պատերով և էլեկտրական լուսավորությամբ:
- ✓ Բարեկարգված բակերում ստեղծվել են հանգստի բոլոր պայմանները թե՛ մեծերի, թե՛ փոքրերի համար: Համալիր բարեկարգման ծրագրով բակային տարածքներում տեղադրվել են նստարաններ, զրուցարաններ, մանկական ժամանակակից խաղեր ու մարզական գույք:
- ✓ Տեղադրվել են **51** խաղեր՝ **7** մանկական և **44** սպորտային:
- ✓ Բարեկարգված բակային տարածքներում իրականացվել են նաև նկարազարդման և գունազարդման աշխատանքներ: **897** քմ նկարազարդման աշխատանքներ են իրականացվել 31 բակերում:



Նկարազարդված
բակային տարածքների
քանակ

Տեղադրված
մանկական խաղերի,
մարզասարքերի քանակ



ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ

2017 թ. Կենտրոնն վարչական շրջանում ծավալուն աշխատանքներ են իրականացվել սոցիալական աջակցության ոլորտում:

- ✔ Կազմակերպվել է վարչական շրջանից 22 և ԼՂՀ սահմանամերձ գործամասերում ծառայող ժամկետային զինծառայողների 282 ծնողների այցելությունը գործամասեր:
- ✔ Տարաբնույթ սոցիալական ծրագրեր են իրականացվել հասարակական և բարեգործական կազմակերպությունների, ինչպես նաև բազմաթիվ անհատ բարեգործների և բարերարների հետ:
- ✔ Համագործակցության արդյունքում վարչական շրջանի սոցիալապես անապահով 4470 ընտանիքներին տրամադրվել է նյութական և պարենային աջակցություն:
- ✔ Դպրոցներ և մանկապարտեզներ հաճախող 1752 երեխաներ ստացել են գրենական պիտույքներ և պայուսակներ:
- ✔ Հայրենական և Արցախյան պատերազմի վետերաններին և նրանց ընտանիքներին, խիստ կարիքավոր հաշմանդամներին, ինչպես նաև ազատամարտիկների կանանց տոների և հիշարժան տարելիցների կապակցությամբ ցուցաբերվել է նյութական և դրամական աջակցություն:
- ✔ Ամանորյա տոների կապակցությամբ 4450 ընտանիքի տրամադրվել են ամանորյա սննդամթերքի փաթեթներ, 3200 երեխայի հատկացվել են նվերփաթեթներ:
- ✔ Սիրիահայ 217 ընտանիք ստացել է նյութական, պարենային և դրամական աջակցություն:
- ✔ Գերմանական Կարմիր խաչի և Կենտրոն վարչական շրջանի համագործակցությամբ բարեգործական ճաշ ծրագրից օգտվել են 70 խիստ կարիքավորներ, իսկ «Օրրան» բարեգործական ճաշարանից օգտվում են 29 խիստ կարիքավոր ընտանիքների երեխաներ և 12 ծերեր:




ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ


- ✓ Ապրիլի 7-ի կապակցությամբ սոցիալապես անապահով ընտանիքների 1-3 ամսական **40** երեխաների հատկացվել է հագուստ և անկողնային պարագա:
- ✓ «Էրեբունի-Երևան 2799» միջոցառումների շրջանակում իրականացվող սոցիալական բաղադրիչ ծրագրի շրջանակում սոցիալապես անապահով տարբեր խմբերի **286** ընտանիքի հատկացվել է անհրաժեշտ կենցաղային տեխնիկա:
- ✓ Նունիսի 1-ի` երեխաների միջազգային օրվա կապակցությամբ **150** սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների հատկացվել է սպորտային հագուստ:
- ✓ Հաշմանդամության միջազգային օրվա կապակցությամբ անկողնային պարագաներ են ստացել լսողական խնդիրներ ունեցող **100** հաշմանդամներ, իսկ տեսողական խնդիրներ ունեցող **80** հաշմանդամների հատկացվել են ձմեռային ծածկոցներ:



ՀՀ և ԼՂՀ սահմանամերձ գոտիներում ծառայող զավակներին այցելած ծնողների թիվ



Դրամական աջակցություն ստացած ընտանիքների քանակ



ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

2017 թ. բազմակողմանի և ծավալուն ծրագրեր են իրականացվել կրթական ոլորտում:

- ✓ Վարչական շրջանում գործող մանկապարտեզներ անվճար հիմունքով հաճախում է **2899** երեխա:
- ✓ Նոր գույքով համալրելու ծրագրով **21** մանկապարտեզների տրամադրվել է **67** երկհարկ մահճակալ, **30** եռահարկ մահճակալ, **37** մանկական զգեստապահարան, **51** մանկական սեղան և **206** մանկական աթոռ:
- ✓ Մանկապարտեզներում փոքրիկների մասնակցությամբ կազմակերպվել են տարաբնույթ թեմատիկ հանդեսներ, մարզական միջոցառումներ, խաղեր, մրցույթներ, իչպես նաև միջոցառումներ՝ նվիրված պետական և ազգային տոներին:
- ✓ Կենտրոն վարչական շրջանի **21** մանկապարտեզների ավարտական խմբեր հաճախող **902** սաներ ստացել են դպրոցական պայուսակներ և գրենական պիտույքներ:
- ✓ ՀՀ Կառավարության ծրագրով կազմակերպվել է կենտրոնաբնակ շուրջ **100** երեխաների հանգիստը Հանքավանի «Հասմիկ» ճամբարում:
- ✓ Վերանորոգման աշխատանքներ են իրականացվել հ. 2, հ.3, հ.7, հ.8, հ.15, հ.19 մանկապարտեզներում:



2017 թ. իրականացվել են բազմազան մշակութային ծրագրեր:

✔ Վարչական շրջանում կազմակերպվել են համերգներ, ցուցահանդեսներ, հանդիպումներ, ինչպես նաև ազգային տոներին, հայ և համաշխարհային դասականներին նվիրված տարաբնույթ միջոցառումներ՝ գրական ցերեկոյթներ, փառատոներ և վարպետության դասեր:

✔ «Երևանյան ամառ» ծրագրի շրջանակում կազմակերպվել է 24 բակային ճամբար:

Վարչական շրջանում գործող Բարսեղ Կանաչյանի և Քրիստափոր Քուշնարյանի անվան արվեստի դպրոցներ և «Մանկապատանեկան ստեղծագործության և դաստիարակության գեղագիտական կենտրոն» է հաճախել 869 աշակերտ:

✔ Երևանի քաղաքապետարանի առաջարկությամբ «Մեգերյան կարպետ» ընկերության կողմից մայրաքաղաքի Կարապի լճի հարևանությամբ բացվել է հայկական վիշապագորգի խճանկարը: Վիշապագորգի խճանկարը պատրաստվել է շուրջ 900 հազար կտոր քարերից, որոնք ներառում են մարմար, գրանիտ, ազուրիտ, տուֆ-ավազաքար:



ՍՊՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

2017 թ. Կենտրոն վարչական շրջանի համար հազեցած է եղել սպորտային ծրագրերով:



- 2017 թվականին Երևանի Կենտրոն մանկապատանեկան համալիր մարզադպրոց, Երևանի Կենտրոնի ատլետիկայի մանկապատանեկան մարզադպրոց և Կենտրոնի շախմատի մարզադպրոց է հաճախել **661** աշակերտ:

Վարչական շրջանում կազմակերպվել և անցկացվել են.


- «ՀՀ Անկախության 26-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների 26-րդ մարզական խաղեր» (վոլեյբոլ, բասկետբոլ, հանդբոլ, սեղանի թենիս, ֆուտբոլ, ատլետիկա, ֆուտզալ, ծովափնյա վոլեյբոլ),
- ՀՀ Ազգային Ժողովի գավաթի խաղարկություն 1-6 դասարանների աշակերտների միջև (ատլետիկա մարզաձև),
- «Կենտրոն վարչական շրջանի վետերան շախմատիստների առաջնություն»,
- ՀՀ նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» հանրապետական մրցույթ փառատոն,
- «Առողջ սերունդ, պաշտպանված հայրենիք» համաքաղաքային ամենամյա ավանդական բակային փառատոն (ֆուտբոլ, վոլեյբոլ, հանդբոլ, բասկետբոլ, հեծանվավազք, մարզատրամաբանական խաղեր),
- Նախագորակոչային և զորակոչային տարիքի դպրոցականների ռազմամարզական խաղեր,
- Կենտրոն վարչական շրջանի հանրակրթական դպրոցների աշակերտների միջև անցկացվող սպորտլանդիաներ,
- Վարչական շրջանի մանկապարտեզների միջև անցկացվող «Առողջ մարմնում՝ առողջ հոգի» խորագրով ամենամյա սպորտլանդիային մասնակցել են վարչական շրջանի 10 մանկապարտեզների **100** սաներ:



ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՆԱԶԱՊԱՏՈՒՄ

2017 թ. Կենտրոն վարչական շրջանում զգալի աշխատանքներ են իրականացվել քաղաքային կանաչապատման ուղղությամբ:

- ✓ Վարչական շրջանում բարելավվել է **9700** քմ ընդհանուր մակերեսով կանաչ տարածք:
- ✓ Տնկվել է **5700** ծառ և **202486** ծաղիկ:
- ✓ Վերանորոգվել և ստեղծվել է **147** գծմ երկարությամբ ոռոգման ցանց, փոխարինվել են փականները, ներկվել են խողովակները:



ՀԱՄԱՏԵՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ», «ՎԵՌԼԻԱ ԶՈՒՐ», «ԵՐԵՎԱՆ ԳԱԶ» ՓԲԸ-ՆԵՐԻ ՀԵՏ

2017 թ. Կենտրոն վարչական շրջանում իրականացվել են ջրատար խողովակների, փականների կարգավորիչների և կոյուղագծերի վերանորոգման և գազիֆիկացման աշխատանքներ:


- ✓ Վերանորոգվել է **14250** գծմ ջրամատակարարման համակարգը, նորերով են փոխարինվել ջրատար համակարգի հանգույցները, փականները, կարգավորիչները և խողովակները: Իրականացվել է շենքերի **12685** գծմ ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցի վերանորոգում:
- ✓ Վերանորոգվել է **2750** գծմ ընդհանուր երկարությամբ կոյուղագիծ:
- ✓ Իրականացվել է **1150** գծմ գազիֆիկացում:
- ✓ «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից բարելավման ներդրումային ծրագրով իրականացվել է **1860** գծմ հոսանքագծերի փոխարինում 11 հասցեներում:



ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑ

2017 թ. իրականացվել են արտաքին լուսավորության նոր ցանցի տեղադրման աշխատանքներ:

- ✔ Արտաքին լուսավորության նոր ցանց է անցկացվել փողոցներում և բակերում: Բազմաբնակարան շենքերի շքամուտքերում նորոգվել են էլեկտրաէներգիայի մատակարարման համակարգեր:
- ✔ Անցկացվել է **9069** գծմ լուսավորության նոր ցանց՝ **241** լուսակետով:



ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ

2017 թ. Կենտրոն վարչական շրջանում ակտիվ աշխատանք է իրականացվել արտաքին կապերի զարգացման ուղղությամբ:

- ✔ Համագործակցության շրջանակներում մի շարք ծրագրեր են իրականացվել ԱՄՆ Կալիֆորնիայի Գլենդել քաղաքի, ՌԴ Մոսկվայի Կենտրոն վարչական շրջանի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի և ՀՀ Կոտայքի մարզի հետ:
- ✔ ՀՀ Երևանի Կենտրոն և ԼՂՀ Ասկերան վարչական շրջանների միջև հաստատված բազմակողմ համագործակցության շրջանակներում կազմակերպվել են մի շարք փոխայցելություններ, իրականացվել են մի շարք միջոցառումներ և ծրագրեր:
- ✔ Համագործակցության շրջանակներում Կենտրոն վարչական շրջանը ԼՂՀ Ասկերանի շրջանի հետ ամփոփել է համատեղ իրականացված աշխատանքների արդյունքներն ու քննարկել նոր ծրագրեր: Վարչական շրջանի պատվիրակությունը այցելել է տեղի գորամասերից մեկը և հանձնել նվերներ:

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ

- ✔ 2017 թվականի ընթացքում ՀՀ Կոտայքի մարզի հետ համագործակցության շրջանակներում իրականացվել են կրթական-մշակութային, մարզական և սոցիալական ծրագրեր, կազմակերպվել են փոխայցեր, համատեղ կազմակերպվել են միջոցառումներ:
- ✔ Վարչական շրջանը «Էրեբունի-Երևան 2799» ծրագրի շրջանակներում անցկացվող միջոցառումներին մասնակցելու նպատակով հյուրընկալել է Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի հրավերով Երևան ժամանած ԱՄՆ Կալիֆորնիայի Գլենդել քաղաքի քաղաքապետ Վարդան Կարապետյանի և Մոսկվայի կառավարության նախարար, սոցիալական պաշտպանության դեպարտամենտի ղեկավար Վլադիմիր Պետրոսյանի գլխավորած պատվիրակություններին:
- ✔ Երևանի Կենտրոն վարչական շրջանի և Գլենդել քաղաքի միջև ստորագրվել է համագործակցության մասին փոխըմբռնման հուշագիր՝ գործընկերային հարաբերություններ հաստատելու նպատակով: Վավերացված հուշագրով կկազմակերպվեն կրթական, մշակութային և առողջապահական տարաբնույթ միջոցառումներ և կյանքի կկոչվեն տեղական ինքնակառավարման օրինակելի փորձի փոխանակման նոր ծրագրեր:





**Մենք
հաշվետու ենք**
մեր համաքաղաքացիներին

ԹԵԺ ԳԻԾ՝
+(374 11) 518-488
kentron@yerevan.am

